«:Բ: հարազատաց Զաքարէի եւ Իւանէի» հետ իր ազգակցութեան մասին: Եւ վերջապէս, Սանահինում Գրիգոր Տուտէորդի վարդապետի մահարձան-խաչքարի կողքին կանգնած խաչքարի թիկունքին ունենք, ամենայն հաւանականութեամբ, նոյն Յովհաննէս Ա-ի թողած 9 տողանոց վիմագիրը. «Ի թվի՝ :ՈՀԶ: [=1227 թ.]. *ես՝ տ՝ր Յոհանէս, առաջնորդ ս՚ուրբ ուխտին Հաղբատա, կանգնեցի զխաչս ի հանգստարանի սնուցողի իմո Յովանէս քահանա[յ]ի: Որք երկրպագէք, յիշեցէ՛ք ի Տ՝ր»*[138]*: Ընդսմին,, համադրելով Կիրակոս Գանձակեցու խօսքերը («որ յառաջն եթող զաթոռն [Հաղբատայ] եւ գնաց ի Խաչէն») եւ Խաղարավանքի վիմագրերի տուեալները*[139]*, կարող ենք, թերեւս, չկասկածել, որ Յովհաննէս Ա-ն նախ՝ Հաղբատի վանահայր-եպիսկոպոս է ձեռնադրուել ԺԲ. դ. վերջերին, դրանից ինչ-որ ժամանակ անց վերադարձել է հայրենիք, կառուցել Խաղարավանքի գմբեթաւոր եկեղեցին ու վանահայրութիւն արել այնտեղ, ապա 1204 թ. վերադարձել է Հաղբատ: Այդժամ նա Խաղարավանքը յանձնել է «իր եղբայր Հասանին ու նրա որդիներին», այսինքն՝ Դօփի որդի Յովհաննէսին, որն էլ իր հօրեղբօր մահուանից յետոյ պիտի ձեռնադրուէր Հաղբատի եպիսկոպոս:*

Վերադառնանք Դօփի սկեսրայր Գրիգորի խնդրին, որի յիշատակումն իր որդի Հասանի կողմից վերեւում տեսանք Խաղարավանքի եւ Դաղիվանքի մէկական վիմագրում (1219 եւ 1224 թթ.)[140]*: Եթէ ընդունենք յուշարձանագէտ Սամուէլ Այվազեանի այն դիտարկումը, ըստ որի Դաղիվանքի համալիրում «տաճար» կոչուած կառոյցի 1211 թ. չինարարական վիմագրի հեղինակ Գրիգորէսը*[141] *ոչ թէ հոգեւորական է եղել (այն է՝ Հասան Մեծի ու Մամախաթունի հոգեւորական որդի Գրիգոր-Գրիգորիսը), այլ աշխարհական*[142]*, ապա կարող ենք համարել, որ* Գրիգորէս *անուանաձեւով ունենք Հասան Կրօնաւորեալի՝ Ծարի իշխան դարձած որդու, այսինքն՝ Դօփ Զաքարեան իշխանուհու սկեսրայրի ինքնայիշատակումը: Եւ այսպիսով, Դօփի ամուսին Հասանի հայրը ոչ մի կերպ չի դառնում «Վախտանգ» (ԺԲ. դարի կէսի՝ մի «երրորդ»!), ինչպէս վերը նշուած թիւրըմբռնման հետեւանքով պնդում է Բ. Ուլուբաբեանը*[143]*: Դա մնում է նոյն Գրիգորը*

138 Տե՛ս **Կ. Ղաֆադարեան**, *Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները*, Եր., 1957, էջ 180-181 (N 170):

139 Տե՛ս վերեւում, ծնթ. 132 եւ 124, 125:

140 Տե՛ս վերեւում, ծնթ. 122, 123:

141 Բնագիրն է. «Թ՚ուին :ՈԿ: *[=1211 թ.]*. ես՝ *Գրիգորէս*, որդի *Հասանա*, շինեցի զտաճարս յիշատակ հոգո իմո. յաղաւթս յիշեցէ՛ք» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 212, N 749. **Ս. Կարապետեան**, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 116, N 58):

142 **Ս. Այվազեան**, *Դաղիվանքի հոգեւոր շինութիւնների կառուցման ժամանակագրական յաջորդականութիւնը*, - ՊԲՀ, 2006, թիւ 3, էջ 204: Որոշ վերապահում ենք անում, քանի որ տուեալ դիտարկումն, այնուամենայնիւ, լրացուցիչ աղբիւրագիտական հիմքերով ամրապնդուելու կարիք ունի. իրականում վիմագրերում ունենք հոգեւորականի՝ առանց «տէր» նշումի, միայն անունով հանդէս գալու ոչ մեծաթիւ այլ դէպքեր եւս: Տե՛ս, օր.՝ Գանձասարի գաւթի հիւսիսային դռան բարաւորի վրայ՝ «Թիւ :ՉԻ: *[=1271 թ.]*... ես՝ *Յոհանէս*, որդի Իւանէի, առաջնորդ ս՚ուրբ ուխտիս Գանձասարա...» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 50, N 122), Բերդաձորի Ս. Գրիգոր վանքի եկեղեցու հիւսիսային պատին, իր հօր կողմից ժամանակին այդ եկեղեցուն «սպասաւոր տրուած» տէր Գրիգորի վիմագրում՝ «ես՝ *Գրիգորս*, որդի Սակոի, վերստին շինեցի զեկեղեցիս ի թուի՝ :ՉԸ: *[=1259 թ.]*...» (նոյն տեղում, էջ 116, N 387):

143 **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 155-156: Այս մօտեցումը, ցաւօք, առանց յատուկ փաստարկումների թեթեւօրէն կրկնւում է նորագոյն աշխատանքներում, տե՛ս, օր.՝ **Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան**, *Հանդաբերդի վանքը*, էջ 11: Հեղինակների մատնանշած (էջ 12, ծնթ. 8) Հաղբատի յայտնի Աւետարանի հետագայի յիշատակարանի (ձեռագիրը 1223 թ. ոմն Սարգսի կողմից նուիրուել է Մեծ Կողմանց եպիսկոպո-